Նկարուած են $96^{\text{բ}}$ և $176^{\text{ա}}$.
ա) Բնագիրը 19,1×11 սմ. երկրորդ տող· մեր նկարը $13\frac{1}{2}\times 7\frac{1}{2}$ սմ.։
բ) Բնագիրը 11×11 սմ. մեր նկարը 11,2×11,5 սմ.

97. 98. *Մատ. Ս. էջմ. № 680/759 (կար 666)։ Մանր ուսմունք, կաշէկազմ, $7\frac{1}{2}\times 11$ սմ., թերթ 181 հին։ ԳԻՐ Աքանչելի բոլորգիր (տես մանաւանդ յիշատակարանը, նկարը, Տախտ. ԾՁ. ձայնանիշներով)· միջեան $8\frac{1}{2}\times 5$ սմ.։ ԳՐԻՉ. Ստեփանոս քահանայ (ժամանակով և տեղով յարմար նոյնացնելու Գոյներիցանցի հետ, թէպէտ գրի բնոյթն ուրիշ)։ ՍՏԱՑՈՂ. Ստեփանոս քահանայ «պատուական հոգևոր եղբայր մեր (գրչի)». ստացողի եղբայրներն են Կոստանդին քահանայ, Կիւրակոս, Յովսէփ սարկաւագ։ Սրանց խնամող և ուսուցիչն է «պատկառելի քահանայ և պատուելի ծերունի Դաւիթ»։ ՏԵՂ. «Ի հռչակաւոր անապատս Սկևռայ, ընդ հովանեաւ ս̃բ Փրկչի. և մաւր լուսոյ Ա̃ծածնի և կենսագիր ս̃բ Նշանիս, մերձ յանմատոյց դղեակս Լամբրոնի, որ է գլուխ Տարսոնի և ի ստորոտ մեծի լերինն Տաւրոսի· ի լաւ և յընտիր աւրինակաց»։ ԺԱՄԱՆԱԿ. 1278 թ Փրկչական. «ի թուիս հայոց ՉԻԷ» տես. նկար 98. Տախտ. ԾՁ.,*

Նկարուած են. ա) $67^{\text{ա}}$. բնագիրը. 8,1×4,6 սմ., մեր նկարը 8,5×4,7 սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։ բ) $180^{\text{բ}}$. բնագիրը 8,1×5 սմ., մեր նկարը 7,7×4,7. սմ. գրեթէ նոյն մեծութեամբ, քիչ փոքր։

99. *Մատ. Ս. էջմ. № 1556/1563 (Կ. 1518). Նարեկ.* թուղթ. *17×12,3 սմ. թերթ 399. ԳԻՐ, Արևելեան բոլորգիր (երկաթագրախառն), միջեան $12\times 8\frac{1}{2}$ սմ։ ԳՐԻՉ. Մարտիրոս։ ՏԵՂ. «ի վանս Վանական վարդապետ(ի), առաջ(նորդ գո)լով Պետրոս վարդապետի», Խորանաշատու վանք։ ԺԱՄԱՆԱԿ. 1283 թ. Փրկչական. «ի ՉԼԲ թվիս գրեցաւ գիրքս Գրիգորի Նարեկեցի»* (sic).

Նկարուած է $312^{\text{բ}}$., բնագիրը $8,2\times 8\frac{1}{2}$ սմ., մեր նկարը 8,1×8,4 սմ., գրեթէ հաւասար մեծութեամբ։

100. *Մատ. Երուս. Ս. Յակ. № 2568|3., Աւետարան նկարազարդ,* կազմն *արծաթապատ, նոր. ՌՃՂԹ. թուականից. $25\frac{1}{2}\times 19$ սմ.։* Մագաղաթ, *շատ ազնիւ։ ԳԻՐ. Սիրուն բոլորգիր, երկիջեան, $16\frac{1}{2}\times 5$ սմ., առանց մանր ծանօթութեանց ներքևում։ ՍՏԱՑՈՂ. Վասակ արքայեղբայր, Կոստանդին թագաւորի որդին։ ԺԱՄԱՆԱԿ. 1270—1284 թ. թ. մէջ. Վասակ արքայեղբօր մահը «ՉԼԳ», «ի մարտի ի ԺԳ»։*

Ծանօթ. Զ-ը մէկն է ԺԳ. դարու գրչութեան կարևոր ձեռագրներից մանրանկարների և փառագրերի ճոխութեամբ։ Մանրանկարներից նշանաւորագոյնն են ստացողի և իւր երկու որդւոց պատկերները, որոնց տակն էլ Յովհաննէս արքայեղբօր մակագրութիւնն է մեր նկարը, $320^{\text{ա}}$։

Բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

101. *Մատ. Ս. էջմ. № 944/1500 (Կ. 924) «Ճառընտիր Մխիթար Այրիվանեցու» անունով յայտնի· ժողովածու փիլիսոփայական գրուածոց թարգմանու-*